ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան փ., շ. 55, Հեռ. (060)700131

N 106-26
20 հունվար 2026 թ.

ՆԱՐԵԿ ԴԱՎԹՅԱՆ ԷԴՎԱՐԴԻ Ա/Ձ
ՏՆՕՐԵՆ
ՆԱՐԵԿ ԴԱՎԹՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ու Ց Ում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ գործընկեր

Դիլիջանի համայնքապետարանի, ի դեմս համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի, (այսուհետ՝ Պատվիրատու) և «Նարեկ Դավթյան Էդվարդի» ԱՁ-ն, ի դեմս տնօրեն Ն.Դավթյանի, (այսուհետ՝ Կատարող), միջև 28.10.2025 թվականին կնքվել է ՀՀ-ՏՄԴՀ-ԷԱՃԾՁԲ-25/10-1 ծածկագրով «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի ամանորյա տոնական ձևավորման ծառայությունների» կատարման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի 1.1 կետի համաձայն Կատարողը ստանձնում է Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի ամանորյա տոնական ձևավորում ծառայությունների մատուցման պարտավորությունը, համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

Հաշվի առնելով այն փաստը, որ սահմանված ժամկետում «Նարեկ Դավթյան Էդվարդի» ԱՁ-ի կողմից չեն կատարվել պայմանագրային պարտավորությունները՝ մատուցվել է պայմանագրի N1 և N 2 հավելվածին չհամապատասխանող ծառայություն, Պատվիրատուն իրավունքունի. Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը (Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 զրո ամբողջ հինգ տասնորդական)տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում), ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը (Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով):

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ)խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Պատվիրատուն օգտվելով Պայմանագրով սահմանված, իր կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու և իրեն պատճառված վնասների հատուցում պահանջելու իրավունքից, Դիլիջանի համայնքապետարանի և «Նարեկ Դավթյան Էդվարդի» ԱՁ-ի միջև 28.10.2025 թվականին կնքված ՀՀ-ՏՄԴՀ-ԷԱՃԾՁԲ-25/10-1 ծածկագրով «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի ամանորյա տոնական ձևավորման ծառայությունների» կատարման պայմանագիրը համարել միակողմանի լուծված:

Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում ենթակա է գանձման ինչպես Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով սահմանված տույժերը, այնպես էլ պայմանագրի ապահովման **2 480 000** (երկու միլիոն չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել Դիլիջանի համայնքապետարանի 900405051716 հաշվեհամարին, և որակավորման ապահովման **3 720 000** (երեք միլիոն յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել Դիլիջանի համայնքապետարանի 900405051716 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն, Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը իր ավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե սույն ծանուցումը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում վճարվի պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ապա «Նարեկ Դավթյան Էդվարդի» ԱՁ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**